



ԲԱՆԿԵՐԸ ԹՈՓ-1000-ում

03.02.2014



ՀՀ կառավարությանը կից ՊԵԿ-ի կողմից հրապարակված (աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ ցանկեր – <http://www.taxservice.am/>) առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված են Հայաստանի 21 առևտրային բանկերը, որոնք թվով կազմում են ներկայացված

կազմակերպությունների 2.1 տոկոսը: Նախ նշենք, որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի առևտրային բանկերի հիմնական գործառնությունները ազատված են ԱԱՀ-ից և ընդհանրապես, ելնելով գործունեության բնույթից, առևտրային բանկերը նաև այլ տեսակի անուղղակի հարկեր վճարող չեն հանդիսանում: Արդյունքում, թվում է, թե 1000

հարկատուների ցանկում առևտրային բանկերը վճարման ցուցանիշով տեսականորեն չեն կարող զբաղեցնել բարձր տեղեր: Մակայն...

Ընդհամենը հարկերը բոլոր 1000 կազմակերպությունների գծով կազմել են 664.4 մլրդ ՀՀ դրամ, իսկ միայն բանկերը վճարել են 37.7 մլրդ դրամ, կամ ընդհանուրի 5.7 տոկոսը: Այդպիսով, բանկերը նույնիսկ ԱԱՀ չվճարելու պայմաններում միջին հաշվով ցանկում խոշոր հարկատուներ են. երբ թվով կազմում են 2.1 տոկոս, իսկ վճարված հարկերով՝ 5.7 տոկոս: Առևտրային բանկերի ընդհամենը վճարված հարկերի միջինը՝ 1.8 մլրդ դրամը, շուրջ 3 անգամ գերազանցում է մնացած կազմակերպությունների միջինին, որը կազմել է 664.3 մլն դրամ:

Ուղղակի հարկերի ընդհանուրը՝ շահութահարկի և եկամտային հարկի գծով, վճարված բոլոր 1000 կազմակերպությունների կողմից, կազմել է 221.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ միայն բանկերը վճարել են 35.05 մլրդ դրամ, կամ 15.9 տոկոսը: Այստեղ բանկերը էապես առաջնային դիրքերում են: Համեմատության համար նշենք, որ ուղղակի հարկերով 1000 առաջին խոշոր հարկատուների ցանկում գրեթե բոլոր բանկերը՝ թվով 18-ը, գտնվում են առաջին 100-յակի ցուցակում: Առևտրային բանկերի վճարված շահութահարկի և եկամտային հարկի միջինը՝ 1.6 մլրդ դրամ,

շուրջ 7 անգամ գերազանցում է մնացած կազմակերպությունների միջինին, որը կազմել է 221.1 մլն դրամ:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանում գործող բոլոր 21 առևտրային բանկերը միասին 2011թ. վճարել են 21 մլրդ դրամ հարկեր և տուրքեր, իսկ 2012-ին՝ ավելի քան 25 մլրդ:

## ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՎՈՒՄ Է

03.03.2014



2013թ. արդյունքները վկայում են Հայաստանի տարածքում գործող բանկերի միջև մրցակցության շարունակվող սրման մասին, ինչի պայմաններում դժվարանում է շահույթ ապահովելը: Բանկերի ROA-ն, ակտիվների շահութաբերության մակարդակը, կազմել է 1.81%, 2012թ-ի 1.94% դիմաց:

Միաժամանակ ROE-ն, կապիտալի եկամտաբերության մակարդակը, կազմել է 11.12%, նախորդ տարվա 11.2% դիմաց: Ավելացնենք, որ ROA-ն և ROE-ն իջել էին նաև 2012թ-ին 2011թ-ի նկատմամբ, երբ այս ցուցանիշները կազմել էին համապատասխանաբար 2.36% և 12.55%:

Դա բացատրվում է նրանով, որ անցյալ տարի՝ մարտից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում, ավանդների միջին տոկոսադրույքն աճել էր 9.99%-ից մինչև 10.42% (տվյալները՝ ՀՀ ԿԱ Ազգային վիճակագրական ծառայություն), իսկ վարկերինը՝ նվազել էր 17.08%-ից մինչև 15.04% (իմիջիայոց, 2012թ. արդյունքներով վարկերի տոկոսադրույքը նույնպես նվազել էր, այս անգամ 1%, իսկ ավանդներինը՝ մնացել էր նույն մակարդակի վրա): Այսպիսով, բանկերի եկամտաբերությունը (տոկոսային սպրեդը) շարունակում է նվազել: Եթե լինենք ավելի ճշգրիտ, 2013թ. արդյունքներով Հայաստանի բանկային համակարգի եկամտաբերության մարժան իջել է 7.09%-ից մինչև 4.62%, այսինքն՝ սպրեդը նվազել է 2.47%-ով:

Միաժամանակ վերջերս հրատարակված Հայաստանի ազգային մրցունակության 5-րդ զեկույցում նշվում է, որ մեր երկրում դեռևս բարձր է տոկոսադրույքի սպրեդը, չնայած խոսվում է նաև նրա նվազման միտումների մասին: Չեկույցում

բերվում են 2012թ. տվյալները, երբ սպրեդը Հայաստանում 7.7% էր, այն դեպքում, երբ Ադրբեջանում այն 8.1% էր, իսկ Վրաստանում՝ 11.4%:

Եթե 2012թ. վերջին Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր շահույթը կազմել էր գրեթե 42.7 մլրդ դրամ (15% աճ նախորդ տարվա համեմատ), ապա 2013թ. արդյունքներով՝ արդեն 48 մլրդ դրամ (աճը՝ 12%):

Ավելորդ չի լինի նշել, որ այդ ամենը կատարվում է երկրում տնտեսական աճի հանգչելու և գործարար ակտիվության նվազման ֆոնին, որոնց արդյունքում բանկերի վարկային պորտֆելների վատթարացման ռիսկն ավելանում է: Մասնավորապես, արդյունաբերական ձեռնարկությունները սկսում են դժվարանալ վարկերի մարման հարցում:



### ԹՄԲԼԻԿ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼՈՎ...

20.03.2014



2012թ. ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ծավալը կազմել է ավելի քան 1.5 տրլն դրամ, ինչը 21%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Վարկավորման ծավալների նման զգալի աճը պայմանավորված էր վարկերի տոկոսադրույքների իջեցմամբ և վարկավորման ընդհանուր պայմանների

մեղմացմամբ, ինչպես նաև Հայաստանի տնտեսության աշխուժացմամբ:

2013թ. Հայաստանի տնտեսությունն առճակատվեց աճի տեմպերի դանդաղացման հետ, ինչը, հասկանալի է, լրացուցիչ խնդիրներ ստեղծեց նաև բանկերի համար: Այնուհանդերձ, նույնիսկ այդ պայմաններում երկրի բանկային համակարգը շարունակեց ավելացնել տնտեսությունը սնող վարկային ներդրումները: Այսպես, անցյալ տարվա արդյունքներով ՀՀ բանկերի կողմից տրված վարկերի համախառն ծավալն ավելացել է մինչև 1.765 տրլն դրամ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նույնիսկ ընդհանուր տնտեսական պայմանների վատթարացման դեպքում բանկերը շուրջ 17%-ով ավելացրել են տնտեսության վարկավորումը, ինչը համադրելի է նախորդ տարվա աճի տեմպերի հետ:

Դրա հետ մեկտեղ նշենք, որ բանկերի համախառն վարկային պորտֆելի մեջ չաշխատող վարկերի մասնաբաժինը 2013թ. արդյունքներով աճել է չնչին չափով մոտ 0.3%, շարունակելով մնալ 4%-ի սահմաններում: Չաշխատող ակտիվների մեծ մասը, 2013թ. դեկտեմբերի դրությամբ, բաժին է ընկնում սպառողական վարկերին (1.08%), որից հետո առևտրին (0.68%), մշակող արդյունաբերությանը (0.56%), շինարարությանը (0.45%), հիփոթեք վարկերին (0.3%), հանրային սննդին և գյուղատնտեսությանը (երկուսն էլ՝ 0.17%): Իմիջիայլոց, ֆինանսական բնագավառում չաշխատող ակտիվները բացակայում են:

Վարկային ներդրումների ծավալով 1-ին և 3-րդ տեղերը զբաղեցնում են սպառողական և առևտրային ֆինանսավորումը (ինչը զարմանալի չէ), իսկ այ 2-րդ տեղում գտնվում է արդյունաբերությունը:

**ԱԿՑԻԱ ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

*Ապրիլի 1, 2014  
ք. Երևան*



**Արդշինինվեստբանկը**

դրամական փոխանցումներից օգտվող հաճախորդների համար 2014 թվականին 3 ամիս շարունակ՝ ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ, անցկացնում է ակցիա, որի շրջանակներում Արդշինինվեստբանկում սպասարկվող **Avers,**

**IntelExpress, Sigue, MoneyGram, Anelik, UniStream, Ria** և **Быстрая Почта** համակարգերից ցանկացածով փոխանցում ուղարկող կամ ստացող յուրաքանչյուր 500-րդ հաճախորդ կստանա 20,000 (քսան հազար) ՀՀ դրամ:

Ինչպես նշել է Արդշինինվեստբանկի Մանրաձախ բիզնեսի տնօրեն Արթուր Գյուլազյանը.

- «Մենք մշտապես ձգտում ենք մեր հաճախորդներին մատուցել բարձրորակ ծառայություններ: Արդշինինվեստբանկի ծառայություններից օգտվող հաճախորդներին որակյալ սպասարկման հետ մեկտեղ սպասվում են նաև հաճելի անակնկալներ: Քանի որ Բանկում օրական սպասարկվում են 1,000-ից ավել դրամական փոխանցում իրականացնող հաճախորդներ, ապա մեկնարկող

ակցիայի շրջանակներում մենք կունենանք նշված գումարը ստացող հաճախորդներ յուրաքանչյուր օր»:

Արդշինինվեստբանկի բոլոր 55 մասնաճյուղերում և գլխավոր գրասենյակում սպասարկվում են փոխանցումների 8 համակարգեր՝ **Avers, IntelExpress, Sigue, MoneyGram, Anelik, UniStream, Ria** և **Быстрая Почта**:

Մասնաճյուղերի հասցեներին ծանոթացեք հետևյալ հղումով՝  
[http://www.ashib.am/mission.php?lang\\_id=3&inc=7](http://www.ashib.am/mission.php?lang_id=3&inc=7)

\* \* \*

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):

